

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
28/06/2010թ թիվ 1/669-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի
27/12/2010թ թիվ 5-Լ որոշմամբ
15/04/2011թ թիվ 2-Լ որոշմամբ

«13» մայիսի 2011 թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

----- Արթուր Զավադյան

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի նախագահ

----- Անդրանիկ Նորեկյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-020

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ԿԱՆՈՆՆԵՐ)

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կանոնները սահմանում են Երաշխավորման ֆոնդի միջոցների ձևավորման, դրանց կառավարման կանոնները, ինչպես նաև Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության չափանիշները և դրա մասին որոշման կայացման կարգը:

2. Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) *հաշվետու ամսաթիվ*՝ Երաշխավորման ֆոնդ պարբերական վճարներ կատարելու համար սույն կանոնների 8-րդ կետով սահմանված վերջնաժամկետի օր, ինչպես նաև այդ օրվան հաջորդող 45-րդ օր, իսկ Բյուրոյի նախաձեռնությամբ՝ նաև այդ ժամանակահատվածում ընկած ցանկացած այլ օր,

2) *ներկայացված պահանջ*՝ հատուցում ստանալու համար տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից Բյուրոյին ներկայացված պահանջ, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարման համար տուժողի կողմից Բյուրոյին ներկայացված պահանջ, հատուցումների գծով Բյուրոյին ներկայացված բողոք-պահանջ, հատուցումների կամ բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարման գծով Բյուրոյի դեմ Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը ներկայացված պահանջ (հայցադիմում) կամ դատարանի կողմից ընդունված հայցադիմում, Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի համապատասխան որոշումը (վճիռը) վիճարկելու վերաբերյալ դատարանի կողմից ընդունված հայցադիմում,

3) *կարգավորված պահանջ*՝ ներկայացված պահանջ, որի գծով առկա է հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու վերաբերյալ Բյուրոյի որոշում (հատուցման գործընթացի մասնակի կարգավորման դեպքում պահանջը համարվում է կարգավորված միայն պահանջի այն մասով, որի վերաբերյալ առկա է հատուցումը վճարելու կամ մերժելու վերաբերյալ որոշում), տուժողի կամ նրա իրավահաջորդի կողմից հատուցումից կամ Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումից զրավոր հրաժարվելու փաստը հավաստող փաստաթուղթ, Բյուրոյի՝ բողոք-պահանջն ըստ էության լուծող պատասխան, Բյուրոյի և տուժողի միջև համաձայնություն՝ Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի՝ Բյուրոյի կողմից վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ, Բյուրոյի դեմ Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը

ներկայացված համապատասխան պահանջը կամ դատարան կամ արբիտրաժային տրիբունալ ներկայացված հայցն ամբողջությամբ մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ պահանջի քննությունը մերժելու կամ դադարեցնելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշում (վճիռ) կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի (արբիտրաժային տրիբունալի) վճիռ (որոշում): Ընդ որում, հատուցումների կամ բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարման գծով Ֆինանսական համակարգի հաշտարարին, դատարան կամ արբիտրաժային տրիբունալ ներկայացված հայցերի (պահանջների) դեպքում Բյուրոյի կողմից հատուցում (լրացուցիչ հատուցում) վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու վերաբերյալ որոշումը (նոր որոշումը) կայացվում է այդ հայցով (պահանջով) Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի՝ գործն ըստ էության լուծող որոշումը (վճիռը) կողմերի համար պարտադիր դառնալու կամ այդպիսին չդառնալու վերաբերյալ Բյուրոյի ծանուցվելուց կամ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումը (վճիռը) օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բյուրոն մտադիր չէ բողոքարկել հայցվորի պահանջները ամբողջությամբ բավարարած դատարանի համապատասխան վճիռը (որոշումը): Ընդ որում, մտադրության բացակայության դեպքում Բյուրոն համապատասխան որոշումը կայացնում է դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշման (վճռի) մասին տեղեկանալուց հետո,».

4) *Բյուրոյին ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ (ՆՉՊՊ)*՝ Բյուրոյի կողմից սույն կանոնների համաձայն հաշվարկվող մեծություն, որն օգտագործվում է Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության փաստի առկայության ստուգման հաշվարկում,

5) *հնարավոր կորուստների պահուստ*՝ Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 25-ի թիվ 73 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման և օգտագործման կարգը» Կանոնակարգ 3/09-ի համաձայն հաշվարկված պահուստ, որն օգտագործվում է Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության փաստի առկայության ստուգման հաշվարկում,

6) *կառավարում*՝ Երաշխավորման ֆոնդի միջոցների հետ կապված Բյուրոյի ներդրումային քաղաքականության սահմանում, ներդրումների իրականացում, ներդրվող միջոցների վերադարձելիության ապահովում և Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուցումների և Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումների իրականացում,

7) *Ֆինանսական ակտիվ*՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ֆինանսական ակտիվներ:

3. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև նշված օրենքների հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Երաշխավորման ֆոնդի միջոցները ներառում են Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարները, Օրենքով սահմանված կամ օրենքով չարգելված այլ ձևերով ներդրված միջոցները (այդ թվում՝ Բյուրոյի կողմից Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններից որպես պատասխանատվության միջոց գանձված տուգանքները), ինչպես նաև այն ակտիվները, որոնցում ներդրվել են դրանք և դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտները (այսուհետ՝ Երաշխավորման ֆոնդի միջոցներ):

5. Երաշխավորման ֆոնդ բոլոր վճարները կատարվում են Կենտրոնական բանկի կողմից Օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն Երաշխավորման ֆոնդի համար բացված հատուկ հաշվին: Այդ հաշվին մուտքագրվում են միայն Երաշխավորման ֆոնդի դրամական միջոցները, իսկ հաշվից ելքագրումներ կարելի է իրականացնել միայն Օրենքի, սույն կանոնների և այլ իրավական ակտերի համաձայն միջոցները տեղաբաշխելու, Օրենքի 49-րդ հոդվածի համաձայն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցումներ վճարելու և Օրենքով սահմանված դեպքերում Երաշխավորման ֆոնդից այլ վճարումներ իրականացնելու նպատակով:

6. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից օրենքով (լրացուցիչ վճարների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով Բյուրոյի խորհրդի որոշմամբ) նախատեսված չափը գերազանցող միանվագ, պարբերական կամ լրացուցիչ վճարներ կատարելու դեպքում գերազանցող գումարները համարվում են հաջորդ ժամանակաշրջանների համար սահմանված պարբերական վճարների կամ լրացուցիչ վճարների (եթե վերջինս ենթակա է վճարման առաջիկա պարբերական վճարից ավելի վաղ) համար տվյալ ապահովագրական ընկերության կողմից կանխավճարված գումարներ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ գերազանցող վճարում կատարած ապահովագրական ընկերությունը Օրենքի համաձայն պարտավոր չէ այլևս պարբերական, լրացուցիչ վճարներ կատարել: Այս դեպքերում ապահովագրական ընկերությունների կողմից օրենքով (լրացուցիչ վճարների դեպքում՝ Բյուրոյի խորհրդի որոշմամբ) նախատեսված չափը գերազանցող վճարումների գերազանցող մասը Բյուրոյի կողմից ետ է վերադարձվում ապահովագրական ընկերություններին:

6.1. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից օրենքով, սույն կանոններով կամ Բյուրոյի խորհրդի որոշմամբ (լրացուցիչ վճարների դեպքում)

սահմանված չափով, կարգով և ժամկետներում Երաշխավորման ֆոնդին վճարներ կատարելու պարտականությունը խախտվելու դեպքում խախտում թույլ տված անդամից գանձվում է տույժ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

ԳԼՈՒԽ 3. ՄԻԱՆՎԱԳ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

7. Ապահովագրական ընկերությունները Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Երաշխավորման ֆոնդին կատարում են միանվագ վճար՝ 15 000 000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

8. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ տվյալ եռամսյակին հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Երաշխավորման ֆոնդին կատարում են պարբերական վճարներ՝ նախորդ տասներկու ամսում իրենց կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրերից հավաքագրված և հավաքագրվելիք ապահովագրավճարների 0.5 տոկոսի չափով:

9. Եթե Բյուրոյի պատասխանատու ակտուարի կողմից իրականացված հաշվարկների համաձայն Երաշխավորման ֆոնդի միջոցները բավարարում են առաջիկա որոշակի ժամանակահատվածում Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրների իրականացման համար՝ առանց Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունության վտանգման, ապա Բյուրոյի խորհուրդը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը նշված ժամանակահատվածով դադարեցնելու առաջարկությամբ:

10. Սույն կանոնների 9-րդ կետով սահմանված առաջարկությունը ներկայացնելիս Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում,

2) Բյուրոյի խորհրդի նիստի արձանագրություն՝ Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին որոշում ընդունելու միջնորդությամբ Կենտրոնական բանկ դիմելու վերաբերյալ,

3) համապատասխան հաշվարկներ (հաստատված Բյուրոյի պատասխանատու ակտուարի կողմից), որոնք հիմնավորում են Երաշխավորման ֆոնդի միջոցների բավարարությունը Երաշխավորման ֆոնդի առջև դրված խնդիրների իրականացման համար առաջիկա ժամանակահատվածում և Երաշխավորման ֆոնդի ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից նման դադարեցման անվտանգությունը:

ԳԼՈՒԽ 4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎՃԱՐՆԵՐԸ, ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

11. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Երաշխավորման ֆոնդին լրացուցիչ վճարները կատարում են, եթե Երաշխավորման ֆոնդի միջոցները բավարար չեն Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուցումները վճարելու կամ Օրենքի

23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումները (այսուհետ՝ Երաշխավորման ֆոնդի միջոցների արտահոսք) կատարելու համար:

12. Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության փաստի առկայությունը Բյուրոյի կողմից ստուգվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հաշվետու ամսաթվից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության փաստի առկայության ստուգման գործընթացի պատշաճ իրականացման համար պատասխանատու է Բյուրոյի գործադիր տնօրենը:

13. Երաշխավորման ֆոնդի միջոցները համարվում են անբավարար, եթե

$$U_{\phi} < \max (X, U_{\psi})$$

որտեղ

U_{ϕ} - հաշվետու ամսաթվի դրությամբ Երաշխավորման ֆոնդի միջոցների փաստացի մեծությունն է՝ նվազեցված հնարավոր կորուստների պահուստի գումարի չափով:

U_{ψ} - Երաշխավորման ֆոնդի միջոցների արտահոսքի կանխատեսվող մեծությունն է՝ հաշվետու ամսաթվին հաջորդող 45 օրերի կտրվածքով:

X - 222 մլն ՀՀ դրամ:

14. Երաշխավորման ֆոնդի միջոցների արտահոսքի կանխատեսվող մեծությունը (U_{ψ}) հաշվարկվում է Բյուրոյի պատասխանատու ակտուարի կողմից առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հաշվետու ամսաթվից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

15. U_{ψ} -ի մեծությունը չպետք է փոքր լինի հետևյալ տարրերի հանրագումարից.

1) Բյուրոյի կրեդիտորական պարտավորություններ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուցումների և Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումների գծով՝ հաշվետու ամսաթվի դրությամբ,

2) ՆԶՊՊ-ի մեծություն՝ հաշվարկված սույն կանոնների 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերի համաձայն:

16. ՆԶՊՊ-ի հաշվարկման սկզբունքներն են.

1) ՆԶՊՊ-ի չափը պետք է բավարարի մինչև հաշվետու ամսաթիվը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված բոլոր պահանջների վճարման համար:

2) ՆԶՊՊ-ի մեծությունը պետք է հիմնված լինի պահանջները կարգավորելու դեպքում Բյուրոյի կողմից վճարվելիք հատուցումների նախնական հաշվարկի վրա: Ծախսերի նախնական հաշվարկը պետք է լինի ողջամիտ և հիմնավոր:

3) ՆՉՊՊ-ի հաշվարկում չեն ներառվում Բյուրոյի կողմից պահանջների կարգավորման ծախսերը:

17. Հաշվետու ամսաթվի դրությամբ ՆՉՊՊ-ն հաշվարկելու համար իրականացվում է մինչև հաշվետու ամսաթիվը ներկայացված, սակայն մինչ այդ օրը չկարգավորված պահանջների առանձին-առանձին գնահատում: Այն դեպքում, երբ ներկայացվել է պահանջ, սակայն դրա չափի մասին Բյուրոյին դեռևս ոչինչ հայտնի չէ, ապա տվյալ պահանջի գծով ՆՉՊՊ-ն հավասար է օրենքով սահմանված ապահովագրական գումարին:

18. Հատուցումների գծով Բյուրոյին ներկայացված բողոք-պահանջների, ինչպես նաև հատուցման վերաբերյալ Ֆինանսական համակարգի հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռը (որոշումը) դատական կարգով վիճարկվելու դեպքում ՆՉՊՊ-ն հավասար է ներկայացված պահանջի 50%-ին, իսկ հատուցումների կամ բժշկական օգնության հետ կապված ծախսերի գծով Բյուրոյի դեմ ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը ներկայացված պահանջների կամ դատարան կամ արբիտրաժային տրիբունալ ներկայացված հայցերի դեպքում՝ 75%-ին:

19. Երաշխավորման ֆոնդի միջոցների անբավարարության փաստի հայտնաբերման դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենը անհապաղ տեղեկացնում է Բյուրոյի խորհրդին, իսկ խորհուրդը 15 օրվա ընթացքում որոշում է կայացնում լրացուցիչ վճարներ ներգրավելու վերաբերյալ, որով սահմանվում է Երաշխավորման ֆոնդի միջոցների արտահոսքի իրականացման համար անհրաժեշտ լրացուցիչ վճարների չափը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն.

$$L_{\phi_i} = (\max (X, U_{\phi}) - U_{\phi}) * U_i,$$

որտեղ՝

L_{ϕ_i} – Բյուրոյի անդամ i -րդ ապահովագրական ընկերության կողմից վճարման ենթակա լրացուցիչ վճարի չափն է.

U_i - Բյուրոյի անդամ i -րդ ապահովագրական ընկերության մասնաբաժինն է սույն կետով նախատեսված որոշման ընդունմանը նախորդող եռամսյակի ընթացքում ԱՊՊԱ գծով հաշվեգրված ապահովագրավճարների ցուցանիշում: Ընդ որում, ապահովագրավճարների հաշվարկում ընդգրկվում են միայն այն ապահովագրական ընկերությունների կողմից հաշվեգրված ապահովագրավճարները, որոնք Բյուրոյի անդամ լինելու կամ Օրենքի 29-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով պարտավոր են վճարել լրացուցիչ վճարները:

20. Սույն կանոնների 19-րդ կետով նախատեսված որոշման ընդունումից հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, այդ որոշումը Բյուրոյի կողմից ուղարկվում է լրացուցիչ վճարներ կատարելու պարտականություն ունեցող բոլոր ապահովագրական ընկերություններին: Այդ որոշումը ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա

ընթացքում համապատասխան ապահովագրական ընկերությունները վճարում են որոշմամբ սահմանված լրացուցիչ վճարները:

ԲԱԺԻՆ 3. ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Երաշխավորման ֆոնդի կառավարումն իրականացնում է Բյուրոն՝ ի դեմս խորհրդի և գործադիր տնօրենի:

22. Երաշխավորման ֆոնդի միջոցների կառավարման հիմնական նպատակը երաշխավորման ֆոնդի միջոցների հուսալի և եկամտաբեր տեղաբաշխումն է ներդրումների ձևով և դրանց բարձր իրացվելիության ու անվտանգության չափանիշների ապահովումը՝ թույլ չտալով այդ միջոցների ծավալի նվազում:

23. Բյուրոյի խորհուրդը յուրաքանչյուր տարվա համար որոշում և հաստատում է Երաշխավորման ֆոնդի միջոցների հետ կապված ներդրումային քաղաքականությունը (այսուհետ՝ Բյուրոյի ներդրումային քաղաքականություն), մասնավորապես Երաշխավորման ֆոնդի միջոցների տեղաբաշխման ձևերը, ուղղությունները և սահմանաչափերը, որի շրջանակներում իրականացվում է Երաշխավորման ֆոնդի միջոցների կառավարումը:

24. Երաշխավորման ֆոնդի միջոցների ներդրման որոշումների ընդունումն իրականացվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից՝ Ներդրումային հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:

ԳԼՈՒԽ 6. ԲՅՈՒՐՈՅԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

25. Բյուրոյի ներդրումային քաղաքականությունը ներառում է Բյուրոյի կողմից ներդրումային որոշումների կայացման, դրանց իրականացման, ռիսկայնության գնահատման, դիվերսիֆիկացիայի, ներդրումների փոխակերպման ու օտարման կապակցությամբ որդեգրած սկզբունքները, մոտեցումները, պայմաններն ու միջոցները: Ներդրումային քաղաքականության շրջանակներում ամրագրված նորմերը, սկզբունքներն ու մոտեցումները կարգավորում են առնվազն ստորև թվարկված գործընթացները՝

1) Երաշխավորման ֆոնդի միջոցների կառավարման որոշումների ընդունումը և ներդրումային ռիսկերի կառավարումը,

2) Երաշխավորման ֆոնդի միջոցների տեղաբաշխումը(ներդրումները) և վերադարձի գործընթացները և դրանց նկատմամբ հսկողության իրականացումը,

3) տեղեկատվության հավաքագրումը, պահպանումը և գաղտնիության ապահովումը:

ԳԼՈՒԽ 7. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

26. (ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի 27.12.2010թ թիվ 5-Լ որոշմամբ):

27. (ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի 27.12.2010թ թիվ 5-Լ որոշմամբ):

28. (ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի 27.12.2010թ թիվ 5-Լ որոշմամբ):

29. (ուժը կորցրել է «Հայաստանի ավոտապահովագրողների բյուրո» ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի 27.12.2010թ թիվ 5-Լ որոշմամբ):

30. Ներդրումային հանձնաժողովը խորհրդակցական կոլեգիալ մարմին է, որն ուսումնասիրում և քննության է առնում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ներդրումներին առնչվող խնդիրներն ու դրանց վերաբերյալ վերլուծություններն ու գնահատականները, ինչպես նաև ներդրումային որոշումների առաջարկներն ու հիմնավորումները: Հանձնաժողովը գործում է իր գործունեության աշխատակարգի և Բյուրոյի կանոնադրության հիման վրա: Ներդրումային հանձնաժողովի գործառնությունները նկարագրվում են հանձնաժողովի գործունեության աշխատակարգում, որոնք առնվազն պետք է ներառեն՝

1) Երաշխավորման ֆոնդի միջոցների կառավարման խնդիրների, ներդրումային առաջարկների և դրանց վերաբերող այլ նյութերի ուսումնասիրման ու քննարկման կարգը,

2) ներդրումային առկա և պոտենցիալ ռիսկերի պարբերական մոնիտորինգի իրականացման կարգը,

3) օպերատիվ կարգով ներդրումային առաջարկների քննարկման ու համապատասխան եզրակացությունների, հավանության որոշումների կամ մերժման առաջարկությունների ընդունման կարգը:

31. Բյուրոյի գործադիր տնօրենը Ներդրումային հանձնաժողովի եզրակացության հիման վրա ընդունում է որոշում (կարգադրություն), որի հիման վրա իրականացվում են համապատասխան գործողություններ:

ԳԼՈՒԽ 8. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

32. Ներդրումներն իրականացվում են Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից:

33. Բյուրոյի գործադիր տնօրենը, Ներդրումային հանձնաժողովի եզրակացության հետ չհամաձայնվելու դեպքում, որոշման կայացումը քննարկում է Բյուրոյի խորհրդի նիստում: Բյուրոյի խորհրդի որոշումը հիմք է հանդիսանում ներդրումների իրականացման համար:

34. Ներդրումային գործարքների կնքման ուղղությամբ Բյուրոյի գլխավոր հաշվապահի կողմից իրականացվում են առնվազն հետևյալ գործառնությունները՝

1) գործարքի կնքումը հավաստող փաստաթղթերի պատշաճ պահպանում,

2) մոնիտորինգ,

3) եռամսյակային կտրվածքով Բյուրոյի խորհրդին և գործադիր տնօրենին ներկայացվող հաշվետվությունների հետ միաժամանակ ներդրումային գործարքների վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում:

**ԳԼՈՒԽ 9. ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ
ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

35. Բյուրոն որոշում է կայացնում օրենքով սահմանված կարգով դադարեցնելու կնքված գործարքն ու օտարել ներդրման արդյունքում ձեռք բերված ֆինանսական ակտիվը (այսուհետ՝ օտարել ներդրումը) ժամկետից շուտ, եթե ներդրման հատկանիշները գործող օրենսդրական և նորմատիվային պահանջներից շեղվել են և (կամ) արժեթղթի բորսայական գնանշումը փոփոխական տատանումների մեջ է և (կամ) Ներդրումային հանձնաժողովի և Բյուրոյի գործադիր տնօրենի փոխհամաձայնեցված հիմնավոր կարծիքով (իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում՝ Բյուրոյի խորհրդի հիմնավոր կարծիքով) տվյալ ֆինանսական ակտիվում կատարված ներդրումը այլևս չի բխում Երաշխավորման ֆոնդի միջոցների կառավարման՝ սույն կանոններով սահմանված հիմնական նպատակներից:

36. Ներդրումները մարման ժամկետից շուտ օտարելու անհրաժեշտության դեպքում Բյուրոյի գլխավոր հաշվապահը կամ Ներդրումային հանձնաժողովի այլ անդամը Բյուրոյի գործադիր տնօրենին ներկայացնում է համապատասխան հիմնավորումներ: Վերջինս խնդրի վերաբերյալ Ներդրումային հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո ներդրումը օտարելու ուղղությամբ կատարում է համապատասխան գործողություններ: Ներդրումային հանձնաժողովի և գործադիր տնօրենի միջև տարաձայնությունների դեպքում հարցը քննարկվում է խորհրդի նիստում:

37. Գործող օրենսդրական և նորմատիվային պահանջներից ներդրման հատկանիշների շեղման պատճառով ներդրման օտարման առաջարկի հետ միասին ներկայացվում են համապատասխան վերլուծություններ շեղման առաջացման պատճառների և հանգամանքների մասին:

ԳԼՈՒԽ 10. ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

38. Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին Բյուրոյի կողմից Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուցումների և Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումների իրականացումը կատարվում է Բյուրոյի գործադիր տնօրենի որոշմամբ՝ Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված հատուցումների և վճարումների իրականացման կարգի համաձայն: